

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արսիսանեանի խմբագրությունը:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисское Редакция «Маяк».

Խմբագրատունը բաց է առաւօտեան — 2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են առանձին լի գովով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանկիւր ըստից 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպրոցի ընտրութիւնները.— Ներսիսեան դպրոցի ընտրութիւնները հարցը Թիֆլիսում Նամակ Արապելայից, Նամակ Գոթայից, Ներսիսեան լուրերը.— Արտաքին տեսութիւնը, Բերլինի ժողովը, Ֆրանսիա, Նամակ Ե. Պոլսից.— Բաւարիայի լուրերը.— Յայտարարութիւնները.— Բաւարիայի լուրերը, Հռենոսի փոփոխութիւնները:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴԱՊՐՈՑԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կիրակի օր, մայիսի 9-ին ընտրվեցան Թիֆլիսի Տայոց եկեղեցիներում պատգամաւորներ, որք զարու կիրակի օր, մայիսի 16-ին պէտք է հաւաքվեն Ներսիսեան դպրոցի դահլիճում և ընտրեն նոր հոգաբարձուներ այդ դպրոցի համար չորս տարի ժամանակով:

Հին հոգաբարձուներին շատ բաների մէջ մեղադրում են.— մենք այդ մեղադրանքներին պատասխանել, նրանց վրա ուղղորդելն դարձնել անգամ աւելորդ, և մեր արժանաւորութենից ստոր ենք համարում: Այժմ նոքա, որք կուզենային կամ իրանք ընտրվել, կամ իրանց պէսներին մոցնել Ներսիսեան դպրոցը, ի հարկէ ամեն միջոց գործ կը դընեն այժմեան հոգաբարձուների անունը կոտորելու, նրանց երեսին ցէկ գցելու... Դա էլ մէկ տեսակ ընտրողական ազդեցություն է հարկէ, — միայն շատ ազնիւ հնարներով չէ կարող համարվել...

Այժմեան հոգաբարձուների գործունէութիւնը շատ հեշտ չէր: Նոքա նախ և առաջ պէտք է կարգ ու կանոն պահել թէ հոգաբարձական խորհրդական գործակատարութեան մէջ, թէ ուսումնարանի սնտեսական մասի մէջ, — այդ, կարող ենք համարձակ ասել, կատարելապէս աջողկեցաւ նրանց: Այդ մեր խօսքի ճշմարտութիւնը կը տեսնեն նոքա, որք կընտրվեն այժմ նոքա տեղը: Հոգաբարձական ղեկավարութեան գործունէութիւնը, հոգաբարձական մատենները, հաշիւները, հաշիւները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈՆԵՆՈՍԻ ԱՓԵՐԻՑ

(Հանապարհի տպաւորութիւններ)

Այս տարվայ զարման գեղեցիկ առաւօտեան ընթացքին էր, երբ ես թողի բոնը դէպի Ելզաս ճանապարհ ընկնելու համար: Հանկուտ երկաթուղու կայարանը, ես տեսայ մի ննջեցեալի յուղարկաւորութիւն և հարցրի մի ծանօթ թէ ո՞ր էր մեռնողը: «Տեղւոյս գիմնադրայի մի ուսուցիչ — ասաց նա — որ քանի օր առաջ, կայսեր ծննդեան օրը, հրացանաձգութեան ժամանակ, կամեցել էր ինքն էլ իրա ատրճանակը արձակել բայց դժբաղդաբար այդ վերջինը վաղուց չը գործածուած կամ անբերական լինելով, բողբոլվին հակառակ ուղղութեամբ և արձակուել և այսպէսով սպանել է խեղճին: Այժմ նորա մարմինը պէտք է դնայ երկաթուղով իրա ծնունդ թաղը, որ այստեղից մի քանի ժամ է: Այդ լաւ խրատ է, ասացի, — չափազանցութիւնը շատ անգամ վնասակար է եղել:

Բոնը մի փոքրիկ սիրուն քաղաք է Հռենոսի վրա և շատ անուանի է իրեն երկրագործական ակադեմիայով և համալսարանով, որի մէջ ուսել են

Լապաֆուրները, նախահաշիւ կազմելը, — այդ բոլորը նոր ձև, ժամանակակից պահանջներին համեմատ կերպարանք ստացաւ: Առհասարակ ղեկավարութեան գործակատարութիւնը կարգ ու կանոն, որոշ, հեշտ, ղեկավարներ ձև ստացաւ:

Դպրոցին պատկանած անշարժ կայքերը այդ հոգաբարձութեան օրով վերանորոգվեցան, ստացան շնորհալի տեք, բարեկարգվեցան, ընդարձակվեցան և այժմ անհամեմատ աւելի արդիւնք են բերում դպրոցին, քան թէ չորս տարի առաջ:

Ուսումնական մասի վերաբերութեամբ կատարվեցան երկու նշանաւոր բաներ՝ մինն այն է որ չը նայելով վեճակաւոր առաջնորդի կողմից դրած բոլոր արգելքներին, հոգաբարձութեանը աջողկեցաւ արձակել տեսչական պաշտօնից մի անընդունակ և դպրոցի վրա վնասակար ազդեցութիւն ունեցող անձն և երկրորդ որ հիմնվեցաւ դպրոցի մէջ պատրաստական դասատուներ... Մինչև այն ժամանակ ուսումը Ներսիսեան դպրոցում առաջին դասատուներին էր սկսվում և այդ դասատուներ մտնում էին այլ և այլ միակեանց մէջ անհասարակ դարգացման տէր երեխաներ, — մինը բողբոլվին անպատրաստ, մյուսը ծխական մի դպրոցում ժամագիրք սովորած, երրորդը մի որ էլ տիրացուի մօտ ուսում առած երեխայ, որի մտաւոր ընդունակութիւնները փչացած էին իրան անհասկանալի գրաբար գրքերը անգիր սերտելուց, և այլն: Այժմ դպրոցի առաջին դասատուներ մտնող երեխաների կօն տիրեցին տը լաւ պատրաստված, հաւասար զարգացման և ընդունակութեան տէր երեխաներ են, շնորհով այն հիմնարկութեան, Ներսիսեան դպրոցի պատրաստական դասատուներ, որի պրոգրամը և կազմակերպութիւնը ժամանակակից մանկավարժական պահանջներին համեմատ է, և որի վրա դպրոցի վարչութիւնը անմիջական հսկողութիւն կարող է ունենալ: — Եւ թէ առաջվայ պէս, պէտք է ընդունվելին այն խառն ի խառն զարգացման և հասկացողութեան տէր երեխաները զանազան տիրացուներից և ծխական դպրոցներից հաւաքված, որոնց ուղղութեան վրա անհասարակութիւնը, նախահաշիւ կազմելը, — այդ բոլորը նոր ձև, ժամանակակից պահանջներին համեմատ կերպարանք ստացաւ: Առհասարակ ղեկավարութեան գործակատարութիւնը կարգ ու կանոն, որոշ, հեշտ, ղեկավարներ ձև ստացաւ:

մի ժամանակ այժմեան թագաժառանգը, Բիսմարկ, Հէյնէ, Կլեյնէ և այլ երեխի անձինք: Այստեղ էր պատմութեան անուանի պրոֆեսոր Զիբել, որ անցեալ տարի փոխադրուեցաւ Բերլին, Այստեղ ծնուել է Բեռնոլլին, որը արձանը կանգնած է իրա անունով կոչուած հրապարակի վրա: Նոյն պէս Մորից Արնոլտի արձանը Հռենոսի եղեբը, մի բարձրաւանդակի վրա: Սա այն անուանի պատմաբան բանաստեղծն է, որ Նապոլեոն առաջինի տիրապետութեան ժամանակ թնդացնում էր ամբողջ Գերմանիան իրա հայրենասիրական երգերով, — երգեր, որոնք յաջողակ հողմերի նման ոչ սակաւ օգնեցին Նապոլեոնին վերջապէս Ս. Հէյնէի կողմի նաւարկելու: Արնոլտը կանգնած է այժմ մի բարձր տեղ և ցոյց է տալիս մի ձեռքով իրա վաղուց ազատուած սիրելի Հռենոսին վերա և (իրա պատմանդանի վրա փորագրուած խօսքերով, որք իրա երգերից են առնուած) ասում է՝

Rhein, Deutschland's Strom, nicht Deutschland's Grenze!

(Հռենոս, Գերմանիայի գետ, ոչ Գերմանիայի սահման):

Յետոյ հետեւեալ աւելի նշանաւոր խօսքը (որ պատմանդանի հակառակ կողմն է փորագրուած)

Der Gott, Der Eisen wachsen liess, Er wollte keine Knechte!

(Աստուած, որ երկաթը ստեղծեց, Նա չէ ուզում ստրուկներ):

րին էր Ներսիսեան դպրոցին անմիջական վերահսկողութիւն ունենալ:

Ներսիսեան հոգաբարձութիւնը համոզված լինելով, որ գիտական լոյսը հայերս անշուշտ և միմիայն ստանալու ենք Եւրոպայից, աշխատեց միշտ, որքան հնարաւոր էր, թէ ուսուցիչներին, թէ տեսչին հրաւիրել այն երկրապագայներից, որք Եւրոպայում են ուսում առել: Նա այդ պատճառով ձայների բազմութեամբ (9 ձայնով 3-ի դէմ) ընտրեց տեսուչ մի եւրոպակիր Ներսիսեանը, բայց եթէ դա չը հաստատվեցաւ տեսուչ, — այդ հոգաբարձութեան մեղք չէր: հոգաբարձութեան նախագահ, Մակար արքեպիսկոպոս որի սովորութիւնն էր կամայական կերպով վարվել, անդադար խախտել Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը, չը համաձայնեցաւ (թէ և կանոնադրութեան պարտութեամբ այդ տեսուչ հարցերը ձայների բազմութեամբ պիտի վճռվէին) հաստատել յիշեալ երկրապագային տեսուչ դպրոցի: Հոգաբարձութիւնը չը կամեալով այնու ամենայնիւ հեռանալ իր սկզբունքներից, ընտրեց մի այլ երկրապագայ նոյնպէս Եւրոպայում ուսում առած: Սորան հաստատեցին, — բայց դժբաղդապէս դա յայտնվեցաւ վերին աստիճանի անընդունակ մանկավարժ, սահմանափակ երկապագայ զարգացում ունեցող մարդ, բժշկական կրթական ուղղութեան տակ ճշմարտ ուղեղ, որ իր գործունէութեամբ եւրոպական գիտութեան և գերմանական մանկավարժութեան անունը կոտորեց...

Սեղադրում են հոգաբարձուներին, որ նրանք իրանց մէջ երկապագայութիւն ունենին: Կարծիքների և համոզմունքների տարբերութիւնը երկապագայութիւն չէ նշանակում: Որտեղ կան տան և երկու մարդ, հաւանական է որ զոնէ տան և երկու անձ: Նական համոզմունքներ լինեն: Ժողովը կառավարելը կախված է նախագահից: Ուրեմն որքան աւելի երկապագայութիւն պէս է լինէր այնպիսի ժողովներում, որտեղ 50, 70, 100 անդամ կայ... Այո, երբ որ նախագահ անկողնապահ չէ, ընդունակ չէ ժողովը կառավարելու, երբ նա չէ յարգում ձայների

Բոնից երկաթուղին գնում է կից Հռենոսի ձախ ափով մինչև Մայն, որ մի կիցնոս է, ուսկից բաժանվում են Գերմանիայի երկաթուղիների շատ գիծեր: Գետը սաստիկ բարձրացել էր հաւած ձիւների պատճառաւ և ծածկել էր բոլոր մտաակալ դաշտերը և պարտեզները, բայց լոկոմոտիվը մի անյաղթելի վիշապ էր, որ քաջ տալով քամակից իրա անհամար արբանեակները, ծալր անկում բնութեան արգելքների վրա, սարեր, ձորեր ձեղքելով, անցնելով, — գտնում է և արշաւում մի այնպիսի սրբնից արագութեամբ, որ մարդի վրա սարսափ է գալիս...

Այս Հռենոսի երկու կողմը, լեռների և բարձր ժայռերի վրա կեցած միջնադարեան ասպետների թողած յիշատակները, — աւերակները բոլոր այն բերդերի և ամրոցների, ուսկից մի ժամանակ հին ֆեոդալական աւազակները կողոպտում էին ճանապարհին վրա խեղճ գիւղացու քրտնքով ձեռք ձգուած այնատանքի պտուղները, տոնալաճառ գնացող վաճառականների բոլոր ապրանքը, բոլոր փողը: Այս քանդուած եկեղեցիները, մատուռները, վանքերը, ուր մի ժամանակ — Հէյնէյի խօսքերով — երկու սեռի պատկանող կուսակրօնները միջնադարեան կ'ան կ'անէին կաքաւում... Հռենոսի երկաթուղու լոկոմոտիվը պատկերացնում է մեզ մարդկային զօրեղ հանճարը, յառաջադէմ ազատական հոգին, որ այժմ այդ բաների առաջին ու կոկորդի յաւելումը զէս ու զէն սրբի:

բազմութեան վճիռը, ինքն պատկանում է մի յայտնի փոքրութիւն կուսակցութեան, որի օգնութեամբ անբաւականութիւն, թշնամութիւն, երկպառակութիւն է սերմանվում խորհրդի անդամների մէջ և կամայականութիւն գործածելով ամեն ինչով մէջ, իր եսը հաստատված կանոնադրութեան վեր է դասում: — այն ժամանակ ի հարկէ կը ծագեն անմիջական երկպառակութիւններ... Այդ տեսակ մարդ էր Մակար արքեպիսկոպոսը...

Հոգաբարձութիւնը փոխանակ իր գործունէութիւնը հանդարտ առաջ տանելու, հաստատված կանոնադրութեան վրա հիմնվելով և ամեն հարցերը ձայների բազմութեամբ վճռելով: — անցկացրեց իր չորս տարվայ գործունէութեան ընթացքի մեծ մասը ապարդիւն պատերազմի մէջ իր նախագահի ինքնակրթութեան և կամայականութեան դէմ: Կորա համար ճարտարախօս իրողութիւններ կան Ներսիսեան դպրոցի դիւանատան գործերի և հոգաբարձական օրագրութիւնների մէջ: Նախագահի կամայականութեան դէմ, որ 12 հոգաբարձուներից 9 հոգաբարձուների ստորագրված օրագիրը կամայական կերպով անկատար էր թողնում, խախտելով կանոնադրութիւնը: — հոգաբարձուները իրանց գործունէութեան մէջ չորս տարի շարունակ ստիպված էին անդադար երկու քալ անելուց յետոյ, մէկ քալ յետ քաշվել... Ցաւալն է երբ մի խորհրդական տեղի գործունէութիւնը փոխանակ հանդարտ և հաստատ առաջ ընթանալու, ամբողջ չորս տարի շարունակ լարված է լինում անդադար այն մտքով որ պաշտպանէ եղած իրաւունքները, կանոնադրութիւնը, նախագահի կամայականութեան դէմ:

Այժմ ծանապարհը հարկված է հոգաբարձութեան յաջողների համար, այժմ նոր հոգաբարձութիւնը կուենայ մի անկողնապահ նախագահ, որ յայտնել է թէ ոչ մի կուսակցութեան պատկանելու չէ և միշտ հպատակվելու է ձայների բազմութեան վճիռին: Այժմ հեշտ կը լինի գործ կատարել...

Գ. Ա.

ուելով, — գտնում է մի այնպիսի համարձակ թախքով, մի այնպիսի բարձրաձայն գոգնուով որ բոլոր մամուլագետ յիշատակները, բոլոր վատ արարածների յորացած կմախքները, կարճ խօսքով բոլոր միջնադարեան երեւոյթների միացորդը նորա առաջ դրում է, փշրվում...

Հռենոսը շատ գեղեցիկ է մի ամառնային գեղեցիկ երեկոյ, երբ արնի վերջին ճառագայթները ոսկեգոծում են եղեբը: այդպատ ըլուրների գազաթները: Հռենոսը այն ժամանակ խաղաղ է և պատկաւելի մի փառաւոր ծերունու նման և քաղցր ժպտում է իւր սիրելի զաւակներին, որք պատրաստ են նորա համար իւրեանց արեան վերջին կաթիլը թափելու: Այս պատճառաւ գերմանացին անուանում է նորան Vater Rhein (հայր Հռենոս): Ես չեմ յիշում իմ կեանքում մի այնպիսի քաղցր ապաւորութիւն, որ ստացայ մի ամառնային երեկոյ չորհրդաւոր այդ գետի վրայից անցնելով: Կիրակի օր էր, և նաւը լեցուած էր Հռենոսի ուրախ զաւակներով: Երբ մօտեցնալ անուանի լճէնէ կոչուած ժայռերին, բոլոր աղվուկը և երկասարդը ժողովեցան միասին նաւի տախտակաւ կամայական վերա և հնչեցուցին Հէյնէյի յայտնի ժողովրդացած լճէնէյի սիրուն երգը՝

Ich weiss nicht, was soll es bedeuten, Dass ich so traurig bin...

Հէյնէ Հռենոսի մի զաւակ էր, և բոլոր իւր երկարատե պանդխտութեան ժամանակ, փարիզում,

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆ: